


4062



23 SEP 2009

22
C-60

ԶԱՅՆ

ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

«Այսուհետեւ ականջ ունի
ըստ բարեկարգ պահանջման կամ բարեկարգ պահանջման մասին»
Մահմադ Ալի Քաջար

ՅԱԿԱՆՆԵԼՈ ԳՈԼԾԵՎՆ

ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

H. KILIDJIAN
ԳՐԵՑ ԲՐԱԻՐ ԷԴԻԹՈՒՐ
CONSTANTINOPLE

Գ. Ն. ՇԻՇՄԱՆԵԱՆ



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. Խ. Հ. ՏԵՂ-ՆԵՐՍԻԿԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

22
C-60

1909

Զ Ա Յ Ն

ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ

«ԱՆ ՈՐ ԱԿԱՆՉ ՈՒՆԻ ԼՍԵԼՈՒ ԹՈՂ ԼՍԷ»

Յայս. Բ. 11.

Տեր Յիսուս Քրիստոս ըստ, «ո՞չ թէ ամեն մեկը որ
ինձի Տեր Տեր կ'ըսէ պիտի մտնի Երկնից բազաւորութիւնը,
հապա անիկա որ իմ Երկնաւոր Հօռա կամքը կը կատարէ»
Մատթ. է. 21 :

«Բայց Հոգին յայտնի կ'ըսէ թէ ետքի ատենները մեկ
ժամկեները հաւաստէ պիտի ապասմբին եւ մոլորեցուցիչ
ողիներու ու դիւաց ուսմութեներու ուշադրութիւն պի-
տի տան, ստախոսներուն կեղծաւորութեամբը որոնց խրդն-
մտանքը խանձուած է»։ Ա. Տիմ. Գ. 1, 2 :

Դարձեալ ըստ Յիսուս, «Բայց Ուղին Մարդոյ
երբոր զայ, արդեօֆ հաւաստ պիտի զտնի՝ Երկրի վրայ»։
Պուկ. ԺԸ. 8 :

«Քաններուդ դարուն տէմին վրայ կանգնող Յիսուս
Քրիստոսի հաւասարիմ զինուոր մը երք վերոյիշեալ պատ-
գամները կարդայ, չի կրնար անսարքեր զտնուիլ, այլ
ահով ու դողով ինքզինքը կը բնեկ տեսնելու թէ արդեօֆ
ինքը Յիսուս Քրիստոսի «Տեր Տեր» ըսողներէն է, թէ Աս-
տուծոյ կամքը կատարողներէն է»։


Ամենապարզ հւմարութիւն մըն է որ Տեր Յիսուս
իրեն հետեւող հաւասացեալները Երկու մասի կը բաժնէ,
Առաջինները անոնք են որ իրեն շատ մօս կը բալեն,

«Ասուածպատութեան կերպարանքը ունին» եւ չեն դադարիր անոր «Տէր Տէր» ըսելին : Երկրորդը անոնք են որ հնազանդութեամբ իր Հօրը կամքը կը կատարեն, հաւատալով Տէրոջը խոսմունին քէ պիտի մտնեն «Երկնից քագաւորութիւնը» :

«Հոգիին» յայտնած ապատամբութիւնը Առաքելոց օրերեն սկսեց իր թշնամութիւնը Ասուածպային յայտնութեանց դեմ, Առաքեալը կը վկայէ քէ արդեն ելած էին «Հիմենոսներ եւ Աղեքուանդրոսներ», որոնք հաւատակի կողմանն «ճաւակութիւն» կրեցին . Ա. Տիմ. Ա. 19 :

Ուստի Հոգիին յայտնի կերպով ըսածը քէ «Ետի աւենիները մեկ ժանիները հաւատքէ պիտի ապատամբին եւ մոլորեցուցիչ ոգիներու ու դիւաց ուսմունեներու ու շաղրութիւն պիտի տան, սախոսներուն կեղծաւորութեամբը որոնց խոնմանքը խանձուած է», կը գտնենք աւելի յայտնուած Ապատամբութեան յառաջացած եւ զօրացած ժամանակներուն մէջ, որոնք անտարակուսելի ապացոյներով կը գտնենք Քրիստոնէական պատմութեանց մէջ, եւ մինչեւ այսօր անուրանալի իրողութիւններով ալ հաստառուած . որոնց հեղինակները «սախոս կեղծաւորներ կ'անուանէ Ասուծոյ պատգամը եւ որ աւելին է «խոնմանքնին խանձուած» է կըս :

Գրքոյինս նպատակն ի երկու հազար տարւոյ չափ ժամանակի միջոցին Ապատամբութեան առած հսկայ բայլերեն մեկ ժանին ներկայացնել, որոնց հետքերը մինչեւ այսօր բացայաց կը շարունակուին, ի գիտութիւն եւ ի զգոււթիւն անոնց որոնք անկեղծութեամբ կը սիրեն մեր Տէր Յիսուս Քրիստոսի Աւետարանին հւմարութիւնը:



58654-67

ՄՈԼՈՐՈՒԹԵԱՆՑ

ՔԱՅԼԵՐԸ



ԱՌԱՋԻՆ

Յիսուս Քրիստոսի Աւետարանը որոշ և յայտնի կերպով կը սորվեցնէ թէ մարդուս հոգին մարմինէն բաժնուելէն վերջը, փափոխութիւն չի կրնար ընդունիլ, և թէ մարմինին մէջ գործած թէ բարի և թէ չար գործքերուն հաստոցումը պիտի ընդունի Քրիստոսի Աւետարանը առջև դատուելէն վերջը :

Այս ձևմարտութիւնը յայտնուելէն

Երկու չարինը ՏԱՐԻ ՎԵՐջը

Ապատամբութիւնը մեռելներուն համար աղօթք ընել հաստատեց :

ԵՐԿՐՈՐԴ

Աստուծոյ պատգամը կը սորվեցնէ, թէ հին և թէ նոր ուխտերուն յայտնութիւններով թէ Ա.ՍՈՒԽԱԾ է մի միայն արժանի՝ բանական և պատասխանատու մարդուն երկրպագութեան .

Բայց Ապատամբութիւնը Քրիստոսի թուականին

ԵՐԵԲ ՀԱՐԻԿԻ ԹԻՍՈՒԽԻՆ

այնքան զօրացած և հեռացած էր ձշմարտութիւնէն որ
Աստուածային պաշտամանց վրայ աւելցուց սուրբերու,
մարտիրոսներու, և հրեշտակայ պաշտամունքը :

ԵՐՐՈՐԴ

Ապստամբութիւնը ասով ալ գոհ չըլլալով յամի
Տեառն

ԶՈՐԾ ՀԱՐԻԿԻ ԵՐԵՍՈՒԽԻՆ ԵՒ ՄԵԿԻՆ

Կոյս Մարիամին երկրպագութիւնն ալ աւելցուց :

ՉՈՐՏՈՐԴ

Յիսուս իր Առաքեալներուն հրամայեց որ երթանք
բոլոր աշխարհ և Աւետարանը քարողենն բոլոր ստեղծ-
ուածներուն, և անոնց քարողութեանը ՀԱԻՍԱՅՑՈՂ-
ՆԵՐԸ մկրտեն, Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ :

Ապստամբութիւնը Քրիստոսէ ԵՐԵԲ ՀԱՐԻԿԻ ՏԱՐԻ-
ՎԵՐՋԸ սկսեց քարողել ՍԿՋԲՆԱԿԱՆ ՄԵՂՔԻ մոլար
վարդապետութիւնը և անոր հետեւանօք սկսեց մկրտել
անմեղ մանուկները, որոնք մեղք չունին, ոչ ալ կրնան
ՀԱԻՍԱՅԱԼ, և յաջողեցաւ

ՀԻՆԳԵՐՐՈՐԴ ԴԱՐՈՒԽ

ՀՆԴՀԱՆՈՒՐ Քրիստոնեայ եկեղեցիներուն մէջ ալ մացլնել
մանկանց մկրտութիւնը :

ՀԻՆԳԵՐՐՈՐԴ

Ոչ ոք կրնայ տարակուսիլ թէ Քրիստոս իր ժամա-
նակի մարդոցմէ տարբեր հագուստ մը չէր հագներ բաց ի
ան միակտուր պատմուճանէն որ իրեն հետեւող կիները
հիւսեր էին, ոչ ալ Առաքեալները հագուստով կը տար-
բերէին հասարակ ժողովուրդէն .

Բայց Ապստամբութիւնը յամի Տեառն

ՀԻՆԳԵՐԻ ՀԱՐԻԿԻ ՏԵԱՐԻ

Կղերին յասուկ հագուստ մը հնարեց, հասարակ ժո-
ղովուրդին հագուստէն տարբեր :

ՎԵՅՏԵՐՐՈՐԴ

Աստուած իր յայտնութիւնը մարդոց հասկցած և
գործածած լեզուովը յայնեց, և ասոր համար Պէնտէ-
կոստէի օրը Սուրբ Հոգին տասներկու Առաքեալներուն
տասնեւութի չափ տարբեր լեզուներ խօսելու պարգեւը
չնորհեց որ բոլոր լսողները կարենան հատկնալ անոնց
քարողած «Աստուծոյ մեծամեծ բաները» : Գործ . Բ . 11 :

Բայց Ապստամբութիւնը Քրիստոսէն

ՎԵՅՏ ՀԱՐԻԿԻ ՏԱՐԻ ՎԵՐՋԸ

սկսաւ ժողովուրդին չի հասկցած լեզուովը կարդալ և
քարողել Աւետարանը, և մինչեւ այսօր նոյնը կը շարու-
նակէ :

ԵՕԲՆԵՐՐՐՐԴ

Մեր Տէր Յիսուս Քրիստոս իրեն հետեւողնելուն սորվեցուց թէ ամէնքը եղբայրներ են, թէ իրենք «Աւարդի» չի կոչուին, ինչու որ ձեր ուսուցիչը մէկ մըն է, այսինքն Քրիստոս, և թէ «Կրկրի վրայ մէկը ձեզի Հայր մի կոչէք, ինչու որ ձեր Հայրը մէկ մըն է որ երկինքն է». Մատթ. հգ. 7-10:

Ապստամբութիւնը յամի Տեառն
ՎԵՅ ՀԱՐԻՒՄ ՎԵՅԻՆ

Քրիստոսի փոխանորդ մարդ մը կանգնեց և անոր անունը ՊԱՊ դրաւ:

ՈՒՓԵՐՐՈՐԴ

Քրիստոսի Աւետարանը խստիւ կ'արդիլէ կռապաշտութիւնը իր բոլոր ձեւերովը. նոյնպէս ալ Հին Կտակարանը, բայց Քրիստոսի թուականին

ԵԹԾ ՀԱՐԻՒՄ ՈՒԹՍՈՒՆ ԵՒ ՈՒԹԻՆ

Ապստամբութիւնը այնքան զօրացած էր որ կարողացաւ պատկերներու և մասունքներու երկրպագութիւնն ալ մտցընել եկեղեցներուն մէջ :

ԻՆՆԵՐՐՈՐԴ

Աստուծոյ հաւատարիմ ծառան Պօլս Առաքեալ կըսէ, «Աստուծոյ ամէն ստեղծածը բարի է և մերժելու

քան մը չիկայ թէ որ գոհութեամբ ընդունուի, քանզի Աստուծոյ խօսքով և աղօթքով կը սրբուի: Ա. Տիմ. Գ. 4, 5:

Բայց Ապստամբութիւնը Աստուծոյ խօսքն իր թըշնամութիւնը հրատարակեց ետ պահելով հաւատացեալները կերակուներէ և օրերը դանազանելով:

ՏԱՍՆԵՐՐՈՐԴ

Քրիստոս հրամայեց իր Առաքեալներուն որ մկրտեն հաւատացեալները յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ.

Ապստամբութիւնը յամի Տեառն

ԻՆԾ ՀԱՐԻՒՄ ՎԱԹՍՈՒՆ ԵՒ ՀԻՇԽԻՆ

ԵԿԵՂԵՂԻՆՆԵՐՈՒՆ մետաղեայ զանգակները սկսաւ մկրտել:

ՏԱՍՆԵՒԻՄԷԿՆԵՐՐՈՐԴ

Քրիստոս և իր Առաքեալները ամուսնութեան խընդիրը բոլորովին ազատ թողուցին.

Բայց ապստամբութիւնը Քրիստոսի թուականէն

ՀԱԶԱՐ ՏԱՐԻ ՎԵՐՋԻ

սկսաւ արգիլել կղերին ամուսնութիւնը, զոր կը շարունակէ մինչև այսօր:

ՏԱՍՆԵՒԵՐՐՈՒՆՈՒԵՐՐՈՐԴ

Մի միայն անսխալ Քրիստոս Յիսուս է, և իր Յայտնութեան սուրբ խօսքը,

Բայց ապստամբութիւնը յամի Տեառն

ՀԱՅԱՐ ԵՇԹԱՆԱՍՊԻԻՆ ԵՒ ՎԵՅԻՆ
Ակաւ քարողիլ թէ «Եկեղեցին անսխալ է» :

ՏԱՍՆԵԿԵՐԵՔԵՐՐՈՐԴ

Աստուծոյ պատգամը կը սորվեցընէ թէ մշայն Ա.ԱՏ-
ՈՒՄԾ կրնայ մարդոց մեղքերուն թողութիւն տալ .
Ապստամբութիւնը Քրիստոսէ

ՀԱՅԱՐ ՀԱՐԻԻՐ ԻՆՍՈՒԻՆ ՏԱՐԻ ՎԵՐԶԸ

Ակաւ մարդոց ո՛չ թէ մշայն գործած մեղքերուն այլ
նաև գործերու մեղքերուն թողութեան կոնդակներ ծա-
յել բոլոր փափաքողներուն :

ՏԱՍՆԵԿՉՈՐՍԵՐՐՈՐԴ

Քրիստոսի Աւետարանը կը սորվեցընէ թէ մարդիկ
իրենց մեղքերը պարտին Աստուծոյ խոստովանիլ .
Բայց Ապստամբութիւնը Քրիստոսի թուականին

ՀԱՅԱՐ ԵՐԿՈՒ ՀԱՐԻԻՐ ՏԱՍՆԵԿՀԻՆԴԻՆ

պաշտօնապէս հաստատեց քահանաներուն խոստովանու-
թիւնը և անոնց միջացաւ մեղաց թողութիւն ընդունիլը :

ՏԱՍՆԵԿԴԻՆԳԵՐՐՈՐԴ

Քրիստոս Տէրունական ընթրիքը կատարեց «հացոլ»

և «գինիովլ» և պատուիրեց իր Առաքեալներուն նոյնը
ընել «զինքը յիշելու համար» ,

Բայց ապստամբութիւնը ասով չի գոհանալով յամի
Տեառն

ՀԱՅԱՐ ԵՐԿՈՒ ՀԱՐԻԻՐ ՏԱՍՆԵԿՀԻՆԴԻՆ

Գոյափոխութեան վարդապետութիւնը յղացաւ և քարո-
զեց բոլոր եկեղեցիներուն մէջ :

ՏԱՍՆԵԿՎԵՑԵՐՐՈՐԴ

Տէր Յիսուս Քրիստոս իր Առաքեալներուն հետ
վերջին ընթրիքը ըրած միջոցին , երեք Աւետարանիչները
կը վկային թէ «Հաց առաւ օրհնեց և կտրեց և տուաւ
կը աշակերտներուն ու ըստ Առեք կերէք առ է իմ մար-
աշակերտներուն ու ըստ Առեք կերջէն վերջը գոհացաւ
մինս», և «Գաւաթը առաւ ընթրիքէն վերջը գոհացաւ
ու տուաւ անոնց և ըստ Ա.մէնքով ալ խմեցէք ասկէ» .»
Մատթ . իջ . 26-28 : Մարկ . մ-դ . 22-24 և Ղուկ .
իբ . 19-20 :

Ապստամբութիւնը Քրիստոսի թուականին

ՀԱՅԱՐ ԶՈՐԾ ՀԱՐԻԻՐ ՏԱՍՆԵԿՀԻՆԴԻՆ

ևս պահեց հաւատացեալները գտաթին մասնակցելէն
և միայն պատարագիչ քահանան կը խմէ այդ գաւաթը
մինչև այսօր :

ՅԱՍՆԵԿԵՑՈՒԹՅՆԵՐՐՈՐԴ

Արդէն յիշեցինք թէ սուրբ զիրքը կը սորմեցընէ
թէ մարդուս հոգին մարմինէն բաժնուելէն վերջը փու-
փոխութիւն չի կրնար ընդունիլ, այլ մարմինին մէջ գոր-
ծած թէ չար և թէ բարի գործքերուն հատուցումը պի-
տի ընդունի Քրիստոսի առեանին առջև գատուելով։

Բայց Ապստամբութիւնը պաշտօնապէս ՔԱՀԱՐՄՆ
մը ստեղծեց յամի Տեառն

ՀԱՅԱՐ ԶՈՐԾ ՀԱՐԻՒՐ ԵՐԵՍՈՒՆԻՆ

ուր մեռելոց հոգիները կսպասեն Պապին որոշմանը և
հրամանին երկինք կամ դժոխք երթալնին զիտնալու
համար։

ՅԱՍՆԵԿՈՒԹՅՆԵՐՐՈՐԴ

Աստուած անէծքով արգիլած է իր սուրբ յայտնու-
թեանց վրայ աւելցնելը կամ անկէ պակսեցնելը։
Ապստամբութիւնը յամի Տեառն

ՀԱՅԱՐ ՀԻՆԴ ՀԱՐԻՒՐ ՔԱՌԱՍՈՒՆԻՆ

այնքան զրացած և գիրցած էր որ հնարեց անթիւ Ա-
ռանդութիւններ և անոնց Աստուծոյ պատգամի հաւասար
կարեւորութիւն ունենալը քարոզեց և պնդեց և մինչև
այսօր ալ կը պնդէ։

ՅԱՍՆԵԿԻՆՑՅԵՐՐՈՐԴ

Յամի Տեառն

ՀԱՅԱՐ ՈՒԹ ՀԱՐԻՒՐ ՎԱՐԹՍՈՒՆ ԵՒ ԶՈՐԾԻՆ

Ապստամբութիւնը Պապին աշխարհային իշխանութիւնը
հրատարակեց և

ՔՍԱՆԵՐՐՈՐԴ

Քրիստոսի թուականին

ՀԱՅԱՐ ՈՒԹ ՀԱՐԻՒՐ ԵԹԹԱՆԱՍՈՒՆ ԵՒ ԻՆՆԻՆ

Ապստամբութիւնը հասաւ իր գագաթնակը աշխարհին
հրատարակելով Պապին անսխալականութիւնը։

Արդ, սիրելի ընթերցող, այս համառօտ հաւաքա-
ծոն ձրիաբար քեզի նուիրողը Տաճկաստանի մէջ քսան-
եւլեց տարի Քրիստոսի Աւետարանը իր պարզութեամ-
բը քարոզողն է, որ Ամերիկայի քրիստոնեայները կո-
ղոպտելով իր երկրին և իր աղջին Աւետարանը ձրիա-
բար քարոզած է, Կոստանդնուպոլիսէն սկսելով մինչեւ
ներսի գաւառները, իր աշխատութիւնը հազար ութ հա-
րիւր եօթանասուն և իննէն սկսեալ տեւած է մինչև
հազար ինը հարիւր հինգ, իրեն գործակից եղած է
Պատ. կարապետ Գէորգեան Աստուծոյ անձնուրաց և

հաւատարիմ ծառան, և կը գոհանայ Աստուծմէ որ ի-
րենց աշխատութիւնը Աստուած օրհնած է հարիւրաւոր
անմահ հոգիներու Առաքելոց վարդապետութեանցը մէջ
հաստատուելուն, որոնք կը գտնուին Կոստանդնուպոլ-
սոյ, Զմիւռնիայի, Պարտիզակի, Կէօլտաղի, Մար-
սուանի, Քարուքայեայի, Թոգասի, Սեբաստիայի, Զա-
րայի, Քարբերթի, Հայնէ ու Լըճէի, Պէրէժիկի և այլ
տեղաց մէջ, որոնց Քրիստոսի սիրովը յորդոր կը կար-
դայ իրենց կոչմանը մէջ հաւատարիմ մնալու, և ո՛չ թէ
միայն անոնց այլ բոլոր անկեղծութեամբ Քրիստոս Յի-
սուսի հետեւողներուն որ ապստամբութեան բոլոր հետ-
քերէն զգուշանալով հաւատքով հետեւին Տէր Յիսուս
Քրիստոսի քայլերուն որ երբ Որդին Մարդոյ գայ. ի-
րենց մէջ «հաւատք» գանելով փառաւորուի, և հաճի
իրենները հաւաքած ժամանակը, զանոնք ալ ընդունե-
լու երկնից թագաւորութեան մէջ, ուր կը յուսայ և
կ'աղօթէ տեսնել բոլոր Քրիստոսի հաւատարմարար հե-
տեւողները,

Զեր խոնարհ ծառան և ազօթողը

Աւետարանիչ

Գ. Ն. ՇԵՂՄԱՆԵՍԻՆ



1-1

ՀՀ Ազգային գրադարան



NL0159225

